

ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՄԵՐՁՎՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՆԵՐՔՈՅ

Մերձաւորարեւելեան իրադարձութիւնները, Լիբանանի դեմ Իսրայէլի վերջին յարձակումները ա՛լ աւելի մթազնեցին շրջանի երկիրներու հայ համայնքներու ապագայի հեռանկարները: Ինչպէս լաւատես ըլլալ, երբ նկատի ունենանք, մասնաւորաբար, տարածաշրջանի քաղաքական դիմագիծը ամբողջութեամբ իր շահերուն համապատասխան ձեւափոխելու Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը եւ գայն իրականացնելու համար որդեգրած ոճը: Զետեւաբար շրջանի երկիրներու՝ Պարսկաստանի, Լիբանանի եւ Սուրիոյ հայ համայնքներու ճակատագրին մասին մտածելը, տարբեր հաւանականութիւններու համապատասխանող միջոցառումներ ծրագրելը, կը ներկայանան որպէս համազգային պատասխանատուութիւն:

Նշեալ իրադրութիւնը կը պարտադրէ, որ անգամ մը եւս օրակարգի գայ Զ.Բ.Ը.Միութեան երկու տարի առաջ կայացուցած Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակելու որոշումը եւ այդ որոշումը վերաքննելու, վերարժեւորելու անհրաժեշտութիւնը:

Մելգոնեան կրթական հաստատութիւնը իր առաքելութիւն սկսաւ 1926-ին: Իր գոյատեւման ութսուն տարիներու ընթացքին ինամատար եղաւ այն սերունդներուն, որոնք իրենց ծննդավայրերուն մէջ, միջազգային, քաղաքական, հասարակական կամ տնտեսական տագնապներու բերումով ընդունելի ուսումնառական կարելիութիւններէ զրկուած էին: ՄԿԶ-ն եթէ իր գործունեութեան առաջին տասնամեակներուն ապաւեն հանդիսացաւ Ցեղասպանութենէ փրկուած որբուկներուն, վերջին երկու տասնամեակին իր դռները բացաւ Զայաստանի երկրաշարժին անձնող մնացած երախաներուն զոհուած ազատամարտիկի զաւակներուն, նախկին համայնավար երկիրներէ՝ Բուլկարիայէն, Ռումինիայէն, Ալբանիայէն ժամանած աշակերտներուն: Անոնք հոն ստացան միջազգային չափանիշներու համապատասխանող ուսում եւ իրենց ոգին կերտուեցաւ հայու ինքնութեամբ: Տարբեր-տարբեր մշակոյթներէ եկած պարման-պարմանուհիներ գիտակցեցան, որ իրենց միջեւ հասարակ յայտարարը իրենց հայու ինքնութիւնն է: Այն հասարակ յայտարարը, որ իրենցմէ իւրաքանչիւրին համար դարձաւ գոյութեան իմաստ:

Եւ Զ.Բ.Ը.Մ Կեդրոնական վարչութիւնը որոշեց այս կրթական օջախը փակել: Ինչո՞ւ: Ոչ ոք գիտէ պատճառը: Նոյնիսկ այդ որոշումը կայացնողներ: Փոխարինող ո՞ր ծրագրի համար: Մելգոնեան կրթական հաստատութեան անգլագական հնարաւորութիւնները ծաւալող, բազմապատկուող սփիւռքեան ո՞ր կարիքներուն համար պիտի օգտագործուին: Պատասխան չունին այս հարցումները: Անորոշութեան մթնոլորտ մը, որ բնականաբար ծնունդ կու տայ տհաճ, անհեթեթ, անհիմն բազմաթիւ ենթադրութիւններու: Որմէ կը վնասէ նախ Զ. Բ.Ը.Մ-ը: Ինչ որ ակներեւ է սակայն, Մելգոնեան եղբայրներու կտակին ոտնակոխուած ըլլալու հանգամանքն է:

Նախ ըսենք, որ Մելգոնեան եղբայրներու կտակը Զ.Բ.Ը.Մ-ի պատմութեան մէջ արձանագրուած մեծագոյն կտակն է: Զոս կ'արժէ նշել այս պարագան: Բայց եականը այս չէ:

Որպէս կտակի գործադրութեան պատասխանատու, Զ.Բ.Ը.Մ-ի ղեկավարները պէտք է առաջնորդուին այն մտածելակերպով, որմով հիմնաւորուած է Մելգոնեան եղբայրներու կտակը: Այդ մտածելակերպը թե՛ արդիական է, թե՛ ժամանակակից: Անցնող ութսուն տարիները եկած են փաստելու այդ մտածելակերպին ճշտութիւնը միայն: Կտակին հպանցիկ մէկ ընթերցումն իսկ ցոյց կու տայ, որ առեւտրական Մելգոնեան եղբայրները շատ լաւ կը գիտակցէին, որ հաւաքականութեան մը ապագան նախ եւ առաջ կախեալ է նոր սերունդներու կրթութենէն: Շատ լաւ կը գիտակցէին, որ իւրաքանչիւր առողջ հաւաքականութիւն իր նոր սերունդի իւրաքանչիւր անդամին պէտք է ապահովէ լուրջ ուսումնառութեան պայմաններով: Իրենց մտածելակերպին մէջ գոյութիւն չունի ,առեւտրականի շտապ արդիւնաւետութեան ձգտողէ հոգեբանութիւնը: Անոնք շատ լաւ հասկցած էին կրթական կեանքի բնութագրութիւնը: Իրենց մտածելակերպին մէջ գոյութիւն չունէր նաեւ ,ունեցածը անհաշիւ, անհեռանկար տրամադրելու տրամադրութիւնը:

Այնպէս որ հաստատութեան ֆինանսական ենթակառոյցը այնպիսի հիմքերու վրայ դրուած էր, որ հաստատութիւնը ինքնաբաւ ապրեցաւ ութսուն տարի, իսկ ճշգրիտ ղեկավարման պարագային իր գոյութիւնը կրնայ շարունակել դար մը եւս: Զակիրճ արտայայտութեամբ, մեր կրթական կեանքի պատմութեան ,երեւոյթներէն է Մելգոնեան կրթական հաստատութիւնը: Զեւեալաբար Զ.Բ.Ը. Միութիւնը Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակելով սովորական երկրորդական վարժարան մը չէ, որ կը փակէ միայն, այլ նոյնաժամանակ, զանց կ'առնէ համապարփակ

կրթական մտայնացում մը, որ այնքան այժմեական է այսօր եւ որուն պետք է ապաւինինք սփիւռքեան ներկայ պայմաններուն ընդհանրապէս, իսկ Մերձաւոր Արեւելքի համայնքներու պարագային մասնաւորաբար:

Եթէ ՄԿՅ-ն փակուած չըլլար, Իրաքի հայ համայնքի երիտասարդները պիտի դառնային մելգոնեանցիներ: Ապահով մթնոլորտի մէջ պիտի շարունակէին իրենց ուսումը: Մելգոնեանի սան պիտի դառնային Լեհաստան ապաստանած ընտանիքներու զաւակները: Երկրորդական վարժարան չունեցող Պալքանեան երկիրներու հայ համայնքները հայեցի կրթութեան համար ո՞ր պիտի ուղարկեն իրենց զաւակները: Իսկ եթէ Մերձաւոր Արեւելքի մէջ խաղաղութիւնը չհաստատուի եւ հայ համայնքները սկսին նոսրանալ եւ նոր սերունդներու ուսումնական կեանքը ընդհատուի, վարժարան փակողները ի՞նչ պիտի մտածեն:

Մելգոնեան եղբայրները վերոյիշեալ եւ նման պարագաներու համար իրենց հարստութիւնը տրամադրեցին նոր սերունդին: Որպէսզի անոնք չտուժեն պատմութեան քմահաճոյքէն: Յ.Բ.Ը. Միութիւնը չի կրնար այս եականը զանց առնել: Իր պատասխանատուութիւնն է կենդանի պահել բարերարներուն մտայնացումը: Իսկ եթէ այսօր այլապէս կը խորհի, այդ պարագային պետք է կտակը փոխանցուի անոնց, որոնք կը հաւատան Մելգոնեանի առաքելութեան:

Մենք կը մաղթենք, որ ղեկավարները ողջամտութեամբ վերանային իրենց կայացուցած որոշումը: Նկատի ունենան սփիւռքեան պահանջները, Մերձաւոր Արեւելքի քաղաքական իրադրութիւնը, սփիւռքի մէջ ահաւոր համեմատութիւններու հասնող ինքնութեան կորուստը եւ վերաբանան Մելգոնեանի դռները: Աւելին՝ կոչ ընեն հայութեան, որպէսզի իրենց առաջնորդութեամբ ծնին ,նոր Մելգոնեանե-ներ:

ԳԵՂԱՄ ՊԱՏՈՒԿԱՆԵԱՆ, Փարիզ